Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, ք. Լոնդոն, 6-9 նոյեմբեր, 2023 թվական

4. Հրավիրող կողմը

Լոնդոնի արվեստների համալսարան

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում արվեստների կլաստերի ձևավորման գործընթացում համագործակցության հնարավորությունների քննարկում

6. Քննարկված թեմաները

1. «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում Լոնդոնի արվեստների համալսարանի հետ համագործակցության ուղղությունների հստակեցում և փորձի փոխանակում,
2. Խորհրդատվություն տրամադրում Հայաստանում արվեստի բնագավառի համալսարանների միավորման համապարփակ ռազմավարության, ինչպես նաև վերջինիս ներդրման պլանի մշակման համար,
3. Դասախոսների շարունակական մասնագիտական զարգացման նպատակով վերապատրաստման դասընթացների անցկացում,
4. Աջակցություն Հայաստանի արվեստների ուղղվածության երեք պետական համալսարաններում առկա ուսումնական պլանների վերանայմանը,
5. Կրկնակի դիպլոմով ուսուցման ծրագրերի իրականացման հնարավորությունները,
6. Այլ ընթացիկ հարցեր:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը հանդիպել է Լոնդոնի արվեստների համալսարանի պրոռեկտոր, «Central Saint Martins» քոլեջի տնօրեն Ռաթնա Ռամանաթանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են՝ «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում Լոնդոնի արվեստների համալսարանի կողմից խորհրդատվության,ուղեցույցների, առաջարկությունների և գործիքների տրամադրման, ինստիտուցիոնալ կառավարման և զարգացման տարբեր բնագավառներում փորձագիտական աջակցության, ինչպես նաև Հայաստանի արվեստների ուղղվածության երեք պետական համալսարաններում կրթության բովանդակության վերանայման և որակի ստուգմանն առնչվող հարցերում օժանդակության ստանալու հարցերը: Անդրադարձ է կատարվել նաև աշխատանքային հանդիպումների, վերապատրաստման դասընթացների, շարժունության և կրկնակի դիպլոմով ուսուցման ծրագրերին: Բրիտանացի գործընկերները կիսվել են արվեստի, դիզայնի, նորաձևության և կատարողական արվեստների ոլորտի վեց քոլեջները մեկ բուհում միավորելու իրենց փորձով՝ սկսած միաձուլման ռազմավարության մշակումից մինչև միավորված բուհի ֆիզիկական տեղակայում և գույքային ապահովում, վերջինիս գործունեության կազմակերպման և կառավարման նոր լուծումների որդեգրում, կրթական ծրագրերի մշակում և որակի ապահովում: Քննարկումներ են տեղի ունեցել բարձրագույն կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից բուհերի միավորման առավելությունների, համալսարանի ակադեմիական ծրագրերի և միջբուհական համագործակցության հնարավորությունների վերաբերյալ: Սարգիս Հայոցյանը ներկայացրել է «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգի հիմնական դրույթները: Շրջայց է կատարվել Լոնդոնի արվեստների համալսարանի ավելի քան մեկդարյա պատմություն ունեցող «Central Saint Martins» և Չելսի քոլեջներ՝ ենթակառուցվածքային հագեցվածությանը ծանոթանալու նպատակով:

<u>8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>

Հանդիպման ընթացքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ձեռք է բերվել պայմանավորվածություն քննարկումները շարունակելու և հետագայում համագործակցային ծրագրերի իրականացման նպատակով համապատասխան համաձայնագրերի նախագծերի մշակման վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան

14.11.2023 թ.